


# Հ.Մ.Ը.Մ.

## Փայլիկ - Արծուիկ

Հասագոյնը

ԿԱԿՈՒՂ  
ԹԱԹԻԿ





Սկառուտական գիրքերու վերամշակուած այս շարքը, իր երկրորդ  
հրատարակութեամբ, լոյս կը տեսնէ նախաձեռնութեամբ՝

**«Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՂԲԱՅՐ ՄԻՀՐԱՆ  
ՇԻՄՇԻՐԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՖՈՆԸ»-ին**

# **Պատրաստեց եւ խմբագրեց՝ Կարպիս Գապասագալեան**

## **Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ ԻՐԱԽՈՒՆՔ  
ՎԵՐԱՊԱՀՈՒՄԾ Է Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Կողքի ձեւաւորում եւ էջադրում՝  
Եղբ. Յովհաննէս Փամբալեան

## Ո՛Վ Է ՉԱՅԼԻԿԸ



Գայլիկը այն սկաուտն է, որուն տարիքը կը տարուբերի 6էն 11 տարեկանի միջեւ, ան միշտ կ'օգնէ ուրիշին եւ վստահելի է: Ան կը հագնի գայլիկական յատուկ տարագ եւ ամէն շաբաթ ներկայ կը գտնուի հաւաքոյթներուն, ուր կը սորվի սկաուտական, ազգային, կրօնական, բնութեան, մարզական գիտելիքներ:

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՔՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆԵՐԴ

Քու պատասխանատուներդ մեծ տղաք ու աղջիկներ են, որոնց անունները առնուած են **The Rudyard Kiplingի The Jungle Bookէն: Աքելլան՝** մայր գայլն է, որ կը սիրէ ու կը պաշտպանէ իր գայլիկները: **Պալուն** (արջ) եւ **Պաղիբան** (յովազ) Աքելլային օգնականներն են, որոնք գայլիկին

Կը սորվեցնեն գիտելիքներ, մարզանք եւլն.: Այս պատասխանատուները շատ ժամանակ կը տրամադրեն պատրաստելու խաղեր, գիտելիքներ, արշաւներ, հետաքրքրական դարձնելու համար հաւաքոյթներ:

Իմ Աքելլաս: .....

Իմ Պալուս: .....

Իմ Պաղիրաս: .....

## Ի՞ՆՉ Է ՎԵՑԵԱԿԸ

Վեցեակը վեց գայլիկներէ բաղկացած խմբակ մըն է, իւրաքանչիւր վեցեակ կ'ունենայ իր վեցեակին գոյնը, որ կը դրուի թելին վրայ: Վեցեակը ունի իր պետը, որ կը կոչուի վեցեակապետ, ունի օգնական մը՝ փոխվեցեակապետ: Վեցեակապետը ունի երկու դեղին երիզ իր ձախ թելին վրայ, իսկ փոխ վեցեակապետը՝ մէկ դեղին երիզ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
1.- ճանչնալ ազգային դրօշակը . . . . .	8
2.- Վոհմակին օրենքը . . . . .	11
3.- Տերունական աղօթք . . . . .	15
4.- Գայլիկին տարազը . . . . .	17
5.- Հինգ յօդուածներ . . . . .	19
6.- Բարեւելու ձեւերը . . . . .	23
7.- Յիսուսի ծնունդը . . . . .	26
8.- Հաւաքել հայ հինգ հերոսներու նկարներ ...	31
9.- Վարդանանց պատերազմ . . . . .	32
10.- Մոկլիին պատմութիւնը . . . . .	43
11.- Երեք շրջանակները . . . . .	51
12.- Նշանաբանը . . . . .	53
13.- Օղակ եւ կովու կապեր . . . . .	55
14.- Խոստումը . . . . .	58
15.- Մեծ կանչի ձեւը . . . . .	61
16.- Հետախուզական նշաններ . . . . .	67
17.- Անուն, մականուն եւ հասցէ գրել . . . . .	70
18.- Կօշիկ կապել, մազ սանտրել . . . . .	73
19.- Մարմնային ճկունութեան շարժումներ . .	76
20.- Մարմնային ճկունութեան շարժումներ. . .	79

# ԿԱԿՈՒՂ ԹԱԹԻԿ



Անուն մականուն .....

Ծննդ. թուական եւ վայր .....

Տան հասցե .....

Հեռախօսի թիւ .....

Յաճախած վարժարան .....

Մուտքի թուական .....


Խոստման թուական .....

Հետաքրքրություններ .....

Ապագայի միտումներ.....

# 1.- ՃԱՆՉՆԱԿ ԱԶԳԱՅԻՆ ԴՐՕՇԱԿԸ

- Երբ դրոշակին կը բարեւես, դուն կը բարեւես նաեւ Աստուծոյ, ծնողքիդ, ազգիդ, Մայր Հայրենիքին, Արարատին, այսպէս բարեւած կ'ըլլաս դրոշակին, որովհետեւ այս բոլորը Հայաստանը կը ներկայացընեն:





## **Գունաւորէ՛ Ազգային դրոշակը.**

-Կարմիրը կը խորհրդանշէ մեր պապերուն թափած արիւնը:

-Կապոյտը կը խորհրդանշէ երկինքը:

-Նարնջագոյնը կը խորհրդանշէ մեր դաշտերը:



Գծե՛ք եւ գունաւորե՛ք  
բնակած երկրիդ դրօշակը.

## ԳԱՅԼԻԿԻՆ ԴՐՕՇԻՆ

Փայլէ՛, փայլէ՛, ով դրօշակ  
Մեր գլուխներուն վրայ համարձակ.  
Ծալքերդ օդին մէջ վետվետին  
Նման դալար փափուկ մարգին:

Փայլէ՛, փայլէ՛, ո՛վ դրօշակ

*(4 անգամ կրկնել)*

Լանջքիդ վրայ գեղադալար  
Կ'ըլլան մէկ սիրտ, մէկ գաղափար.  
Երկու գայլեր եղբայրօրէն  
«Մեր լաւագոյնը» կը գոչեն:  
Օ՛ն, լսեցէ՛ք. այս է մեր կամք  
Երբ որ սորվինք, գործենք, խաղանք.  
Ի գործ դնել լաւագոյնն մեր,  
Յարգելով միշտ խղճին պատուեր:

Սիրուն դրօշակ եղիր վկայ  
Կը խոստանանք առջեւդ ահա  
Ըլլալ հնազանդ՝ միշտ Աստուծոյ  
Յայրենիքի՝ ծնողաց հաճոյ:


Փայ-լէ, փայ-լէ ով դր-րօ-շակ մեր գլուխներուն վրայ հա-մար-ձակ.  
ծալ-քերդ օդին մէջ վետվե-տին նը-ման դա-լար փա-փուկ մարգին  
ծալ-քերդ օդին մէջ վետվե-տին նը-ման դա-լար փա-փուկ մարգին  
փայ-լէ փայ-լէ ով դր-րօ-շակ փայ-լէ փայ-լէ ով դր-րօ-շակ:

## 2.- ՎՈՂՄԱԿԻՆ ՕՐԷՆՔԸ

1.- Գայլիկը մտիկ կ'ընէ ժեր Գայլը

2.- Գայլիկը ինքզինքը մտիկ չ'ընէր

3.- Գայլիկը մարտը հայերէն կը խօսի



## 1.- Գայլիկը մտիկ կ'ընէ Ծեր Գայլը

Այս կը նշանակէ, որ պէտք է հնազանդիս քու մեծերուդ, ո՛րը որ ալ գտնուիս, ի՛նչ պայմաններու մէջ ալ ըլլաս, նոյնիսկ եթէ հայրիկը, մայրիկը կամ Աքելլան քովդ չեն, քեզ չեն տեսներ՝ պէտք է ընես անոնց ըսածը:



## 2.- Գայլիկը ինքզինք մտիկ չ'ըներ



Եթէ քեզի դժուար գործ մը յանձնես, օրինակ՝ սենեակը մաքրել, պիտի չըսես որ դժուար է, չես ուզեր կամ յոգնած ես: Մտիկ պիտի ընես Ծեր Գայլին՝ քու մեծերուդ խօսքը ու յետոյ պիտի տեսնես, թէ կարծածիդ չափ ալ դժուար չէ եղեր գործը:

## 3.- Գայլիկը մաքուր հայերէն կը խօսի



Պիտի խօսիս միշտ մաքուր հայերէն: Օտար բառեր, անհամ խօսքեր պիտի չգործածես բնաւ. ընկերներուդ հետ, տունը, ակումբը, դպրոցը, երբ ստիպուած չես ուրիշ լեզու մը խօսիլ, պիտի գործածես միայն հայերէնը եւ մանաւանդ մաքուր հայերէն:



**Ժամանց**

..... աճուկ

**90**



*Գտի՛ր այս ճուկին  
անունը,  
նկարներուն  
առաջին տառերը  
տուփիկներուն մէջ  
տեղաւորելէ ետք*


## Ք Ա Յ Լ Ե Ր Պ

Գայլիկներ ենք Յ.Ս.Ը.Ս.ի,  
Անվեհեր, պարկեշտ ու միշտ առաքինի.

*(Կրկնել)*

Ազգանուէր ո՛վ դուք հայ գայլիկներ  
Համախմբուինք շուրջ իտեալին մեր՝  
Յառաջ միշտ դէպի յառաջ,

Ըլլանք հեռատես, գոհուող ու միշտ քաջ:

*(Կրկնել)*



### 3.- ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն: Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:



Բարոյախօսութիւն

*-Մարդկային շատ բնական պարտականութիւն մըն է, երեկոյեան քնանալէ առաջ ծունկի գալ եւ շնորհակալ ըլլալ Աստուծոյ, որ մեզի պարգեւեց այդ օրը:*

## ԿԱՆՉ

Ա.Բ.Գ.Դ.Ե.Զ.Ի. Բարի եկած էք դուք բարի:

## ՊՈՒՊԱՅԻԿԱ


Պուպայիկա, Պուպայիկա պոււմ,  
Պուպայիկա պուպայիկա պոււմ պոււմ պոււմ.  
Չիւմ պոմ պրա, զիւմ պոմ պրա,  
Յ.Մ.Ը.Մ. Յուռա, հուռա, հուռա:



Պու պա յի կա, պոււմ. պու պա յի կա, պոււմ, պուպա յի կա, պու պա յի կա,  
պոււմ, պոււմ, պոււմ, զիւմ, պոմ, պրա, զիւմ, պոմ, պրա, հո-մ են -ը դ-մ են  
հուռ - ա , հուռ -ա , հուռ - ա :



#### 4.- ԳԱՅԼԻԿԻՆ ՏԱՐԱԶՐ



- Տարազը պետք է հագնուիլ վոհմակին հաւաքոյթներուն ընթացքին եւ կամ որեւէ պաշտօնական ձեռնարկներու եւ այցելութիւններու ընթացքին: Տարազը պետք է պահել մաքուր եւ կոկիկ, պետք է կախել պահարանին մէջ, կամ զգուշութեամբ ծալել դարակին մէջ:

**Գունաւորէ՛ տարազին մասերը եւ քովը գրէ՛ ճիշդ անունները.**

## ՓՈՐՁԷ ԾԿՈՒՆՈՒԹԻՒՆԴ

Այս խաղը խաղալու համար երկու գայլիկներ դեմ դիմաց կը նստին գետին, կօշիկին տակը իրա-



րու միացու-  
ցած, ձեռքերը  
գետին: Իւրա-  
քանչիւրը պի-  
տի փորձէ

որոշուած սահմանէն դուրս հանել հակառակոր-  
դը՝ միայն հրելով:

### ԿԱՆՉԵՐ

*Րիբ, Րիբ, Րիբ.*

*Ալահիբ, ալաուբ, ալաա:*

*Աքին, քահին, քահին, քահա...*

*Յ.Մ.Ը.Մ.ի գայլիկները հոս են ահա՛:*

*Պիա, Պիա, Պիա-Էն,*

*Սիա, Սիա, Սիա-Էն,*

*Պիա-Էն, Սիա-Էն,*

*Յ.Մ.Ը.Մ.ի գայլիկները ձեզ կը բարեւեն:*

*Չինկա լոնկա, չինկա լոնկա հէ՛յ, հէ՛յ,*

*Չինկա լոնկա, չինկա լոնկա հէ՛յ,*

*Չինկա լոնկա, հա չու չու*

*Չինկա լոնկա, հա չու չու*

*Յա՛ չու՛ չու՛, հա՛ չու՛ չու՛*

*Յա՛ չու՛ չու՛*

## 5.- ՀԻՆԳ ՅՕԳՈՒՎԾՆԵՐԸ

- 1.- Գայլիկը նախ ուրիշները կը մտածէ.
- 2.- Գայլիկը աչքն ու ականջը կը բանայ.
- 3.- Գայլիկը միշտ մաքուր է.
- 4.- Գայլիկը ճշմարտախօս է.
- 5.- Գայլիկը միշտ ուրախ է.



### **1.- Գայլիկը նախ ուրիշները կը մտածէ**



Պիտի չմոռնաս, որ քեզմէ առաջ ուրիշներու մասին պիտի մտածես, անձնասեր պիտի չըլլաս:

### **2.- Գայլիկը աչքն ու ականջը կը բանայ**

Ուշադրութիւն պիտի ընես, պատահած բոլոր դեպքերը տեսնելու եւ ըսուածները լսելու: Արթուն պիտի ըլլաս:



### **3.- Գայլիկը միշտ մաքուր է**



Մաքուր մտածումով, մարմինով, խօսքով եւ գործով:

**4.- Գայլիկը ճշմարտախօս է**  
Բերանէդ երբեք սուտ խօսք  
պիտի չելլէ:



**5.- Գայլիկը միշտ ուրախ է**  
Եղի՛ր ժպտուն եւ ուրախ,  
չունիս պատճառներ ըլլալու  
տխուր եւ տրտում:

## **Բարոյախօսութիւն**

«Շնորհակալ եմ», «Ներողութիւն» բառերը  
միշտ լեզուիդ ծայրը թող ըլլան եւ գործածէ, երբ  
որ հարկը պահանջէ:


## ԿԱՆՉ

Քոււմ, քոււմաճի, քոււմ, աթիքոււմ, աթիքա,  
ուսթիքի, ուսթիքի, ուխսթիքա, ա՛:

Պումալի քա, ա՛

Յ.Մ.Ը.Մ.ի գայլիկները

հոս են ահա՛:



Պոււմ, աթաքոււմ, աթաքի, աթիքա, ուխսթիքի,  
ուխսթիքի, ուխսթիքա, պումալի քա, ա՛ հո-մենդ-մե-նի  
սկս-ուտ-ներ հոս են ա-հա :



## 6.- ԲԱՐԵԻՆԵԼՈՒ ԶԵԻՆԵՐԸ

Բարեւը կու տանք աջ ձեռքով:  
Երկու մատները կը խորհրդանշեն  
գայլին ականջները:



Երբ կը ձեռնուիս որեւէ գայլիկի



հետ, աջ ձեռքով ձեռնուէ՛, ցուցա-  
մատդ պետք է դպչի դի-  
մացինին դաստակին:


Լման բարեւը կը տրուի,  
պաշտօնական արարողու-  
թիւններուն, դրօշակի արա-  
րողութեան եւ երբ Աքելային  
հանդիպիս:

Պաշտօնական բարեւը կը  
գործածուի Մեծ Կանչի ժամա-  
նակ:



Երբ մեր ձեռքերը զբաղած ըլլան, դիմացի-  
նին կը բարեւենք գլխու շարժումով մը, գլուխը  
խոնարհելով:

## ԿԱՐՄԻՐ ՁՈՒԿԸ



### ***Պետք ունիս.***

- Գիւղի շիշի խցանի մը, խաւաքարտի, երկու հլուկի, կարմիր ներկի, վրձիկի մը, դանակի մը:

- Կտրե՛ խցանը, ինչպէս նշանակուած է նկարին մէջ, ձուկին բերանը շինելու համար: Խաւաքարտին վրայ գծէ եւ յետոյ մկրատով կտրէ ձուկին պոչը եւ լողակները, ինչպէս գծուած են պատկերին մէջ (թիւ 3ը գծէ երկու անգամ): Մարմինին վրայ դանակով կտրէ պոչին եւ լողակներուն տեղերը (դանակով գիծ մը պիտի ընես): Անցուր խաւաքարտները գիծերուն մէջ, փակցուր հլուկները աչքերուն տեղը: Ձուկդ ներկէ կարմիր ներկով (ջրաներկ մի գործածեր):

Երբ ներկը չորնայ, խոշոր ամանի մը մէջ ջուր լեցուր եւ ձուկդ նետէ անոր մէջ:

Կրնաս այս ձուկեն քանի մը հատ շինել, եւ գա-  
նոնք տարբեր գոյներով ներկել եւ կիսովին լեցուն  
թափանցիկ անօթի մը մէջ զետեղել. պիտի ունե-  
նաս գեղեցիկ զարդ մը:

### **ԱՔԵԼԼԱՅԻՆ ԵՐԳԸ**

*Աքելլան ուներ 50 գայլիկ (3 անգամ)  
բոլորն ալ ճարպիկ:*

*Աքելլան ուներ 50 լա լա (3 անգամ)  
բոլորն ալ ճարպիկ:*

*Աքելլան ուներ լա լա լա լա (3 անգամ)  
բոլորն ալ ճարպիկ:*

*(Իւրաքանչիւր անգամ բառ մը չերգել)  
(Կարելի է նաեւ երգել մեր Պալուն ըսելով)*

## **Բարեւ**

Երբ առտու արթննաս եւ երեկոյեան տուն  
մտնես պետք է բարեւես հայրդ, մայրդ եւ ըն-  
տանիքի բոլոր պարագաները: Դպրոցը պետք  
է բարեւես տնօրէնը, ուսուցիչները եւ ուրիշներ:

## 7.- ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Հռոմեացի կառավարիչը հրամայած էր մարդոց, «անոնք որոնք կ'ապրեին իրեն ենթակայ երկիրներուն մէջ, իրենց անունը արձանագրել տալ իրենց ծննդավայրին մէջ»: Հետեւաբար, ամեն մարդ իր ծննդավայրը պետք էր երթար: Յովսէփ ալ



իր կնոջ՝ Մարիամին հետ Բեթղեհեմ գնաց: Մարիամ զաւակ պիտի ունենար: Հոն տեղ չեն գտներ գիշերելու համար: Կը մտնեն ախոռ մը, որպէսզի հոն անցընեն գիշերը:

Հոն ծնաւ Յիսուս Բրիստոս եւ մտորի մը մէջ պառկեցաւ:

Բեթղեհեմի մօտ հովիւներ կային, որոնք ամբողջ գիշերը դաշտերու մէջ կը մնային իրենց հօտին հսկելու համար: Անոնք տեսան Տիրոջ հրեշտակը եւ Աստուծոյ լոյսը՝ իրենց վերել եւ վախցան: Հրեշտակը ըսաւ անոնց.



«Մի՛ վախնաք, ես եկած եմ ձեզի անտելու, թե այսօր, Բեթղեհեմի մեջ ծնաւ որդի մը, որ երբ մեծ-  
նայ պիտի փրկէ բոլոր մարդիկը: Ահաւասիկ Աստ-





ուած խօսեցաւ ձեզի՝ իմ միջոցովս: Դուք պիտի գտնէք մանուկ մը՝ պարուրուած եւ մտուրի մէջ պառկած:



Յանկարծ հովիւները տեսան խումբ մը հրեշտակներ, որոնք Աստուած փառաբանելով՝ կ'երգէին. «Փառքի բարձունս Աստուծոյ. խաղաղութիւն՝ երկրի վրայ եւ մարդոց մէջ հաճութիւն»: Երբ հրեշտակներ

րը երկինք բարձրացան, հովիւները իրարու ըսին.  
«Երթանք Բեթղեհեմ եւ տեսնենք թէ ի՞նչ պատահած է ...»:

Անոնք անմիջապէս Բեթղեհեմ գացին. հոն գտան Մարիամն ու Յովսէփը իրենց նորածինին հետ, որ մտուրի մը մէջ պառկած էր: Երբ հովիւները տեսան նորածինը, գացին, մարդոց պատմեցին իրենց տեսածն ու հրեշտակին ըսածը՝ մանուկին մասին: Մարդիկ զարմանքով լսեցին հովիւներուն պատմածը:

Մարիամ յիշեց բոլոր պատահածները եւ ինկաւ խոր մտածումի մէջ:

Հովիւները վերադարձան շարականներ երգելով եւ փառաբանելով Աստուած՝ բոլոր պատահածներուն համար: Պատահած էր ճիշդ այնպէս՝ ինչպէս հրեշտակը ըսած էր:





ԳուՆԱԼՈՒՐԷ՛

**Ց.- ՀԱՒԱՔԵԼ ՀԻՆԳ  
ՀԱՅ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ՆԿԱՐՆԵՐ**

**-Իւրաքանչիւր նկարին տակ գրէ՛ հերոսին  
անունն ու մականունը.**

## 9.- ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ

### Յազկերտ Բ. եւ իր ծրագիրը

Պարսկաստանի Յազկերտ Բ. թագաւորը մուտնանդ կրակապաշտ էր: Կ'ատեր քրիստոնէութիւնը եւ կ'ուզէր, որ դրացի բոլոր ժողովուրդներն ալ կրակապաշտ ըլլային: Յազկերտ կը մտածէր նաեւ, որ հայերը եթէ քրիստոնէութիւնը




ուրանան եւ կրակապաշտ ըլլան, պիտի ձուլուին պարսիկներուն մէջ:

Յազկերտի այս մտածումները քաջալերողը եղաւ իր խորհրդականը՝ Միհրնեստի, որ թէեւ

խելացի, բայց չար մարդ մըն էր եւ հակառակ էր քրիստոնէութեան:


Միհրներսեհի խորհուրդով, Յազկերտ Նամակ մը գրեց հայոց Կաթողիկոսին եւ մեծամեծներուն յայտնելով, թէ քրիստոնէութիւնը սուտ եւ անպետք կրօնք մըն է, իսկ պարսից կրօնքը՝ ճշմարիտ է: Յազկերտ, իր Նամակով Կաթողիկոսին եւ իշխաններուն առաջարկեց, որ անմիջապէս ուրանան քրիստոնէութիւնը եւ դառնան կրակապաշտ:



Հայոց Կաթողիկոսը, երբ ստացաւ Յազկերտի Նամակը, Արտաշատի մէջ ժողով մը գումարեց: Այդ ժողովին ներկայ էին հայ կղերականներն ու Նախարարները: Բոլորն ալ զայրացան, երբ Յազկերտի Նամակը կարդացին: Հասկցան Յազկերտի միտքը, - ան կ'ուզէր քրիստոնէութիւնը ջնջել Հայաստանէն, որպէսզի այս ձեւով հայ ժողովուրդը ձուլէ պարսիկներուն մէջ:

Այդ ժողովը Նամակով մը պատասխանեց

Յագկերտին: Հայ նախարարները արքայից արքային գրեցին, թե իրենք պարսիկներուն դեմ չեն, կը յարգեն թագաւորն ու իր ժողովուրդը, բայց չեն կրնար ուրանալ քրիստոնէութիւնը, կ'ուզեն քրիստոնէայ մնալ եւ բարեկամ ըլլալ պարսիկ ժողովուրդին:



Հայերու գրած նամակը այսպէս կը վերջանար.

«Այս հաւատքէն ո՛չ ոք կրնայ մեզ հեռացնել, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր եւ ո՛չ սուր ...»:

Յագկերտ զայրացաւ երբ ստացաւ հայերու նամակը. հրամայեց, որ հայ նախարարները շուտով Տիգրան գան՝ բացատրութիւն տալու:

Նախարարները գացին: Յագկերտ սպառնաց անոնց, որ եթէ անմիջապէս չուրանան քրիստոնէութիւնը եւ կրակապաշտ չըլլան, արտօրել պիտի տայ զիրենք եւ պիտի աւերէ Հայաստանը:

Նախարարները տեսան, որ եթե իրենք արտորուին, Հայաստանը անտեր պիտի մնայ եւ Յազկերտ իր ուզածը պիտի կարողանայ ընել:

Մտածեցին եւ որոշեցին երեսանց ուրանալ քրիստոնեութիւնը, վերադառնալ Հայաստան՝ կարգադրութիւններ ընելու համար:

Տիգրան գացած եւ ակամայ ու երեսանց քրիստոնեութիւնը ուրացող իշխաններէն մէկն էր Նաեւ հայոց բանակներուն սպարապետը՝ Վարդան Մամիկոնեան:

Վարդան Մամիկոնեան կը տանջուէր, իր խիղճը հանգիստ չէր, որովհետեւ թէեւ առ երես, բայց վերջապէս ուրացած էր ճշմարիտ հաւատքը: Այդ պատճառով ալ, իր ընկերներուն հետ կ'աճապարէր Հայաստան հասնիլ եւ կատարել իր պարտականութիւնը՝ իր կրօնքին եւ հայրենիքին հանդէպ:


Նախարարները, Հայաստան վերադառնալէ ետք, երկրորդ ժողով մը գումարեցին, երդում ըրին խաչի եւ Աւետարանի վրայ, որ մինչեւ մահ հաւատարիմ պիտի մնան իրենց կրօնքին եւ հայրենիքին:

Այս ժողովէն բացակայ էր Վասակ Սիւնի: Անոր ալ յայտնեցին ժողովին որոշումը: Վասակ համաձայն գտնուեցաւ որոշումին եւ ինք ալ խաչի ու Աւետարանի վրայ ուխտեց հաւատա-

րիմ մնալ կրօնքին ու հայրենիքին մինչեւ մահ:

Վասակ Սիւնի, Յայաստանի մարզպանը, որ փառասեր մէկն էր, կը փափաքէր պարսիկներու օգնութեամբ թագաւոր ըլլալ:

Վարդան Մամիկոնեան, հայոց բանակին սպարապետը, կարգի դրաւ իր զինուորները եւ առաջին անգամ յարձակեցաւ Յայաստան գտնուող պարսիկ գունդերուն վրայ եւ փախցուց զանոնք մեր երկրէն:



Այն ատեն, երբ Յայաստանի մէջ պատրաստութիւններ կը տեսնուէին դէմ դնելու համար պարսիկներուն, պաշտպանելու համար կրօնքն ու հայրենիքը, լուր եկաւ Վարդանի, թէ պարսից բանակը մտած է աղուանից աշխարհը, կը քանդէ եկեղեցիները եւ անոնց տեղ ատրուշաններ կը կանգնէ:

Այս միջոցին Վարդան լսեց, որ Վասակ

դրժած է իր ուխտը եւ իր շուրջ հաւաքելով կարգ մը մարդիկ կը գործէ պարսիկներուն հետ: Վարդան անմիջապէս վերադարձաւ Յայաստան եւ սկսաւ պատրաստութիւններ տեսնել: Վստահ էր, որ պարսիկները ուշ կամ կանուխ պիտի յարձակէին Յայաստանի վրայ:

Վարդան սխալած չէր, Չատկուան օրերէն քիչ ետք, Յազկերտ մեծ բանակով մը հասաւ Յեր եւ Չարեւանդ գաւառներ, որոնք կը գտնուէին հայ եւ պարսիկ սահմանագլուխին վրայ:

Հայ բանակը, թիւով 66.000 հոգի, հաւաքուեցաւ Տղմուտ գետին եզերքը, Աւարայր դաշտին վրայ: Հայոց բանակին մէջ էին Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երեցը, բազմաթիւ եկեղեցականներ եւ ուխտապահ բոլոր նախարարները՝ իրենց գունդերով:

Առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ, բոլորը խոստովանեցան եւ հաղորդութիւն առին: Հայրենասիրական ճառեր արտասանեցին Ղեւոնդ Երեց եւ սպարապետ Վարդան Մամիկոնեան:

Պատերազմը յանկարծ սկսաւ, գետին երկու կողմերէն նետեր տեղացին: Վարդանի գունդը անցաւ Տղմուտի միւս ափը եւ մտաւ պարսիկներուն մէջ. թշնամին սկսաւ փախչիլ: Այդ միջոցին հայոց գունդին մէկ մասը թուլցաւ եւ սկսաւ նահանջել: Պարսիկները սիրտ առին,

փիղերով յարձակեցան ու շրջապատեցին Վարդանի գունդը: Կռիւր կատաղի եղաւ: Վարդան եւ ընկերները կռուեցան մինչեւ իրենց վերջին շունչը:

Աւարայրի ճակատամարտին, Վարդանի հետ հերոսաբար սահատակուեցան Խորէն Խոռխոռունի, Վահան Գնունի, Յմայեակ Դիմաքսեան, Գարեգին Սրուանձտեան, Արշակ Պալունի եւ ուրիշներ: Հայ սահատակներուն թիւն էր 1036, պարսիկներէն մեռան 3544 հոգի:

Վարդանի եւ իր ընկերներուն մահով պարսիկները իրենց նպատակին չհասան սակայն. հայոց մնացած գունդերը քաշուեցան երկրին ներսերը եւ շարունակեցին կռիւր: Միւս կողմէ մեր բարեկամ հոները յարձակեցան Պարսկաստանի վրայ:

Այս կռիւները երկար տեւեցին. Յազկերտ յուսահատած հրամայեց, որ եկեղեցիները բացուին եւ հայերը նախկին ձեւով հետեւին իրենց կրօնքին. միայն կարգ մը կղերականներ եւ նախարարներ Պարսկաստան տարուեցան:

Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երեցը եւ ուրիշ 7 եկեղեցականներ ստիպեցին, որ ուրանան քրիստոնէութիւնը եւ, երբ անոնք հաստատ մնացին իրենց հաւատքին մէջ, սահատակուեցան: Այս սահատակները կը կոչուին Ղեւոնդ-

եանք: Յայոց Եկեղեցին, ամեն տարի, Բարեկենդանի Երեքշաբթի օրը կը տօնէ Ղեւոնդեանք յիշատակը. իսկ Վարդանի եւ Աւարայրի դաշտին վրայ ինկած իր ընկերներուն յիշատակը կը տօնէ Բարեկենդանի Յինգշաբթի օրը:

Վասակ պաշտօնանկ եղաւ, բանտարկուեցաւ եւ բանտին մէջ մեռաւ:

Աւարայրի ճակատամարտը տեղի ունեցաւ 451-ին



ՎԱՐՊԱՆԱՑ ԵՐԳԵՐ

## ԵՐԳ ՎԱՐՊԱՆԱՑ

Լռեց: Ամպերը եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքես խլեցին:

Մնացի մենակ, ոգիս վրդոված,  
Ձեռքերս ծոցիս, գլուխս քարշ արած:

Եւ այնուհետեւ ամեն իրիկուն:  
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
Նրա տխրամած դեմքը նայելիս,  
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ա՛խ, ցուլա՛, փայլե՛, տխրադեմ լուսին,  
Գուցե քո փայլից փայլ տաս եւ Հային:

Պատմե՛ շատերուն Վարդանի մահը,  
Կամ ի՛նչպես կորաւ հայ ազգի գահը,  
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը, - աշխարհն Հայաստան:





# Վարդան

Իմ Հայրենեաց հոգի Վարդան,  
Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան,  
Որ Տըղմուտի աստիճանով,  
Վաթսուն հազար կտրիճներով,  
Չարկիր, զարկուար, ինկար քաջ-քաջ,  
Պարսիկ սըփռած ի ձախդ ու յաջ:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
*Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:*

Աւետարանն ու խաչն առիր,  
Տարիր յերկինս բարձրացուցիր,  
Եւ դու ալ յետ թողիր գացիր,  
Անուշ արեւդ հողին տըլիր,  
Որ հայրենեաց շողայ արեւ,  
Շաւարշանայ դաշտին վերել:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
*Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:*

Արիւնդ կարմիր, կարմիր թափուաւ,  
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ,  
Լուսնակն ելաւ ամպի տակից,  
Պաղ-պաղ թափեց ցօղիկն յաչից,  
Որ հայրենեաց վարդեր բացուին,  
Երգէ պլպուլն դրախտի սարին:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
*Հոգիս հոգւոյդ եղնի դուրպան:*

## 10.- ՄՈՎԼԻԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շատ հին ժամանակ, փայտահատ մը եւ իր ընտանիքը Հնդկաստանի մեծ անտառներէն մէկուն մէջ կը գտնուէին: Խոշոր, կաղ եւ մարդակեր չար



վագր մըն (Շերքան) ալ կը պտըտէր հոն եւ որս կը փնտռէր: Փայտահատը կրակ մը վառած էր եւ տղան՝ պզտիկ Նաթուն կը խաղար գետինը, քարերուն հետ:

Վագրը կը մօտենայ կամաց-կամաց եւ կ'ուզէ պզտիկը փախցնել: Բայց այրած կոճղի մը վրան կը կոխէ եւ ցաւէն կը մռնչէ: Ասոր վրայ փայտահատն ու կինը կը սթափին: Վագրը կը ստիպուի փախչիլ:

Գիշերը, գայլերու ընտանիք մը կը տեսնէ Նաթուն, եւ հայր գայլը գայն իրենց որջը կը տանի: Հոն պզտիկը կը խաղայ գայլի ձագերուն հետ եւ

անոնց թաթերուն փուշերը կը հանէ:

Քիչ վերջը, վագրը, շնագայլին (Թապաքի) առաջ-  
նորդութեամբ, կու գայ գայլերուն որջը եւ Նաթուն  
կը պահանջէ:



- Որսս կ'ուզեմ: Մարդու պզտիկ մը հոս եկած է,  
ինծի տունէ՛ք:

- Գայլերը ազատ ժողովուրդ մըն են, կը պա-  
տասխանէ հայր գայլը: Իրենց հրահանգները կը  
ստանան միայն Աքելայէն, ոչ թէ քեզի պէս եզ սպան-  
նողէ մը: Մարդու պզտիկը մերն է:

Վագրը կը ջղայնանայ եւ գէշ խօսքեր կ'ըսէ գայլ-  
երուն: Այն ատեն մայր գայլը կը պռռայ անոր երեսին.

- Ե՛ս եմ, Ռաքշան, քեզի խօսողը: Մարդու  
պզտիկը ի՛մս է, ի՛մս: Ան պիտի չսպաննուի բնաւ.  
պիտի ապրի, պիտի վագէ ու որսայ վոհմակին հետ:  
Եւ ուշադրութիւն ըրէ՛, պզտիկներու որսորդ, պիտի  
որսայ նաեւ քեզ: Իսկ հիմա, ե՛լ հոսկէ, կորսուէ՛ ...:

Վոհմակին օրենքը կը պահանջէ, որ նոր ծնած պզտիկները ներկայացուին լիալուսնի ժողովին: Հոն բոլորը կը քննեն նորերը ու եթէ պատահի որ չհամաձայնին, պետք է երկու հոգի նորեկին կողմէ խօսին:

Հայր գայլը եւ մայր գայլը երբ իրենց ձագերը կը տանին ժողովի, Նաթուն ալ կ'առնեն իրենց հետ: Արդէն անունը փոխած էր մոկլիի:



Բայց անգուրթ վագրը կու գայ վոհմակի ժողովին, մոկլին օգնութիւն կը պահանջէ: Պզտիկը կ'ազատի արջին ու յովագին շնորհիւ: Արջը՝ գայլիկներու դաստիարակը, խօսք կու տայ կրթել մոկլին, իսկ յովագը՝ որսորդութիւն սորվեցնել անոր, եւ նոր սպաննուած ցուլ մը կու տայ գայլերուն մոկլիին փոխարէն:

Մարդու պզտիկը՝ մոկլին, գայլերուն մէջ կը մնայ անոնց լեզուն կը սորվի, կը խաղայ, որսի կ'երթայ անոնց հետ, մինչեւ 10-12 տարեկան:

## Երգ՝.

- Մոկլին օր մը կ'արշաւեր  
տեսաւ շատ շուներ: (կենդանիներ)

Այս կողմէն հառւ, հառւ,  
այդ կողմէն հառւ, հառւ,  
հոս՝ հառւ, հոն՝ հառւ,  
ամէն կողմէն հառւ հառւ:



- Շարունակաբար՝ տեսաւ՝ կատուներ,  
բադեր, կովեր, ձիեր, էջեր եւայլն:

- Իւրաքանչիւր կենդանիի ձայնը  
նմանողութեամբ շարունակել երգել:


The musical score is written on four staves in G major (one sharp) and common time. The lyrics are written below the notes.

Մօկ-լին օր մը կ'ար-շա -ւեր տե - սաւ շատ շու - ներ  
Մօկ -լին օր մը կ'ար -շա -ւեր տե -սաւ շատ շու - ներ  
այս կող-մէն հառւ հառւ, այն կող -մէն հառւ հառւ, հոս հառւ, հոն հառւ,  
ա - մէն կողմէն հառւ հառւ:

***Գծե՛՛ Մոկլիիկն պատմութիւնը:***

*ԳՃԷ՝ Մոկլիին տեսած կենդանիները:*

**Խաղ**



**Կետերը իրարու միացո՛ւր թիւի շարքով յետոյ գունաւորէ՛:**

**-Երգ**

Օր մը Շերբան ու Թապագին  
Ուզեցին կաշկանդել Մոկլին:  
Մոկլի գա՛րկ աջ ձեռքով.  
(աջ ձեռքով կը սկսին զարնել ոտքին)  
Մոկլի գա՛րկ ձախ ձեռքով.  
(զոյգ ձեռքերով զարնել ոտքին)  
յաջորդաբար՝ աջ ոտքով, ձախ ոտքով,  
ուսերով, մարմինով, գլուխով, լեզուով:

Օր մը շեր-թան ու Թապա - գին ու - զե - ցին կաշ-  
կան - դել մոկ-լին փակիր աջ փա-խիր ձախ:




## 11.- ԵՐԵՔ ՀՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Մ ո կ Լ ի ի պատմութեան մէջ երբ գայլերը հաւաքուին, Աքելլան կը պառկեր ժայռի մը վրայ եւ գայլերը շրջանակ կը կազմէին այդ ժայռին բոլորտիքը:




Մեր վոհմակներուն մէջ ալ նոյնն է ձեւը: Ժայռին տեղը կը գծենք երեք մեթր տրամագիծով շրջանակ մը, որուն մէջտեղը կը գետեղուի թոթմը: Ասոր կ'ըսենք **ժայռի շրջանակ:**

**Խորհուրդի շրջանակը.**- աւելի մեծ է, այս շրջանակին մէջ կը շարուին գայլիկները: Անոր մեծութիւնը կախում կ'ունենայ գայլիկներու թիւէն: Հարկ է որ անոր տրամագիծը հինգ մեթրէն պակաս չըլլայ:



**Չօրահանդեսի շրջանակը.**- անելի մեծ է եւ տասնհինգ մեթրէն պակաս տրամագիծ չ'ունենար: Խորհուրդի շրջանակը Աքելլան լսելու համար է, իսկ զօրահանդեսինը՝ հաւաքոյթներու, պարերու եւ Մեծ Կանչի համար կը գործածուի:



### ԳԻՄԻ ԽԱՂ

Այս նկարները լաւ դիտէ. յետոյ գիրքը գոցէ՝ ու նայէ՝ թէ քանի՞ հատը կը յիշես:



## 12.- ՆՇԱՆԱԲԱՆԸ



Գայլիկին նշանաբանն է «Լաւագոյնը», որ կը նշանակէ.-

- Երբ խաղ խաղաս, ըրէ՛ լաւագոյնդ որպէսզի խումբդ շահի:



- Դասարանին մէջ լաւագոյնդ մտիկ ըրէ՛, որպէսզի լաւ ըմբռնես ուսուցիչին բացատրածը եւ միշտ առաջին մնաս:


- Վոհմակին մէջ, լաւագոյնդ ըրէ՛ որպէսզի վոհմակը առաջ տանիս:

## ԽԱՂ

Երկու  
գայլիկներ կըռ-  
նակ կռնակի  
տուած, ար-  
մուկները իրարու  
անցած,  
իւրաքանչիւրը  
պիտի փորձէ իր  
խումբին քովը  
տանիլ: Միայն  
հրելը  
արտօնուած է:



## Ջետուէ՛ կետերուն



### 13.- ՕՂԱԿ ԵՒ ԿՈՎՈՒ ԿԱՊԵՐ

Կապերը շատ կարեւոր են սկաուտական մեր կեանքէն ներս, կրնաս անոնցմով ձեռային աշխատանքներ ընել, մանաւանդ բանակումի ընթացքին:

#### **Օղակ կապ:**

Օղակ կապը կը գործածուի երկու հաւասար հաստատ չուաններ կապելու:



#### **Կովու կապ:**

Կոյր հանգոյցի պէս է:



## Ժամանց

Տարեդարձի մը երթալը շատ հաճելի է, իսկ անելի հաճելի պիտի ըլլայ երբ քու ձեռքովդ շինուած նուէր մը տանիս ընկերոջդ:

*Ահա քեզի օրինակ մը.-*

*Թիթեղէ որելէ տուփ մը*

*(գովացուցիչի) շուրջը խէժ*

*քտէ, ապա բարակ պարանով*

*պատէ                    գինք,*

*կ'ունենաս մատիտներ դնելիք տուփ մը,*




վրան կրնաս գունաւորել, խաւաքարտներով զարդարել (ծաղիկ, թիթեռնիկ, եւայլն): Գործածէ երեւակայութիւնդ:

## Աբլոր Աղբար



Աբլոր աղբարը մեռեր է,  
Աբլոր աղբարը մեռեր է,  
Ա՛յ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,  
Ա՛յ պիտի չերգէ քոքքոտի քոքքոտա,  
Քոքքոտի քոտի քոտի քոտա,  
Քոքքոտի քոտի քոտի քոտա:

*Կրնա՞ս  
օգնել  
Մոկլիին որ  
պալուհին  
հասնի.*



## 14.- ԽՈՍՏՈՒՄԸ



***«Կը խոստանամ ընել կարելիս՝ հաւատարիմ  
ըլլալու համար Աստուծոյ, հայրենիքիս, ծնողքիս  
եւ վոհմակի (երամի) օրէնքին:***

***Գործել բարիք մը ամէն օր»:***

### ***ԱՄԲՈՂՋԱՅՈՒՐ***

Ես..... կը խոստանամ ընել  
կարելիս հաւատարիմ ըլլալու  
համար.....,  
.....,  
եւ.....: Գործել բարիք մը  
ամէն օր:

## Հաւատարիմ ըլլալ Աստուծոյ՝

Կը նշանակէ սիրել Աստուած, Անոր մասին մտածել միշտ, ամէն օր աղօթել եւ բարի ըլլալ:

**Նաեւ հաւատարիմ ըլլաս հայրենիքիդ, ծնողքիդ եւ վոհմակի (երամի)**

**օրէնքին:**

Այսինքն՝ սիրես հայերէնը, հայոց պատմութիւնը եւ երբեք չմոռնաս մեր հայրենիքը՝ Հայաստանը: Սիրես նաեւ հայրիկը, մայրիկը ըլլաս հնազանդ ու բարի զաւակ, մի՛ մոռնար այս բոլորէն վերջ՝ ամէն օր բարիք մը գործել:



Ուրիշին ծառայութիւն ընելու շատ ձեւեր կան, օրինակ կրնաս մայրիկին օգնել, ծերուկի մը բեռը տանիլ, կրնաս ամէն օր մէկ բարիք գործել, բայց յիշէ որ ինչ ալ ընես, փոխարէնը ակնկալութիւն պիտի չունենաս:

***Քարոյախօսութիւն***

**ՏՈՒՆԷՆ ԴՈՒՐՍ**

Տունեն պիտի ելլես մաքուր ու կոկիկ  
հագուած: Քալած ժամանակ մարմինդ շիտակ  
բռնէ: Միշտ առջեւ դիտէ ու քալէ:

Իրաւունք չունիս ճամբան պռռալու, կանչելու  
եւ ուրիշները խանգարելու:

Ճամբան բարեւէ ծանօթներու եւ բարեկամ-  
ներու:

Դռներու գանգերը մի հնչեցներ  
զուարճանալու համար:

Օգնէ ծերունիներուն, որոնք ճամբան անցնիլ  
կ'ուզեն:

***ԳՈՐԾ ԳԱՅԼԻՆ ԵՐԳԸ***

**Եղեգնադաշտին խորերէն,  
Կը լսե՞ք գայլը,  
Կանչելով շրջանակի բոլոր գայլերը,  
Յո՛ւ, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ բոլոր գայլերը:**



*(Կրկնել)*

**(Երգել.- Dans la jungle profonde-ի եղանակով)**

## 15.- ՄԵԾ ԿԱՆՉԻ ՁԵԻՆ

Գիտե՞ս ինչ կ'ընեին շրջանակ կազմած գայլերը: Երբ ծեր գայլը՝ Աքելլան, ելլեր ժայռին վրայ, կը բարձրացնէին իրենց գլուխները եւ կ'ոռնային,



բարի գալուստ մաղթելու համար անոր:

Մարդէ գայլերն ալ՝ Գայլիկները, նոյնը կ'ընեն: Երբ Աքելլան մտնէ շրջանակէն ներս, անմիջապէս կը ցատկէն եւ կը պոպոզին ոտքի մատներուն վրայ, ձեռքերը գետին՝ իրարմէ հեռացած ծունկերուն մէջէն, բարեւի ձեւով երկու մատները իրարու միացած: Ճիշդ վերի նկարին պէս:

Յետոյ, երբ Աքելլան բարեւէ թոթեմը, բոլոր գայլ-

լիկները միասին կը պոռան.

**Ա՛քե՛լլա՛, մեր լաւագոյնը:**

Այսպիսով ըսել կ'ուզեն, որ պատրաստ են իրենց լաւագոյնը ընելու, Աքելլային խօսքերը մտիկ ընելու համար: Աքելլա բառին առաջին երկու վանկերը պետք է երկար ըլլան եւ վերջինը՝ կտրուկ: Իսկ մեր լաւագոյնը պետք է ըսուի աւելի արագ:



Յետոյ գայլիկները կը ցատկեն ոտքի եւ կը կանգնին պատրաստ դիրքի մէջ, երկու ձեռքով բարեւելով, մատները գոց:



Ճիշդ նոյն ատեն վարիչ վեցեակապետ մը կը պոռայ.

Ձեր լա՛ւա՛գո՛յնը, երկարելով բոլոր վանկերը, բացի վերջինէն:

Եւ գայլիկները վար կ'առնեն իրենց ձախ ձեռքը ու միայն աջով բարեւելով կը պատասխանեն.

Այո՛...ո՛, մեր լաւագոյնը:

Յետոյ վար կ'առնեն իրենց աջ ձեռքն ալ եւ կը սպասեն հրահանգի:

Լա՛ւ, ի՞նչ իմաստ ունի Մեծ Կանչը, ինչո՞ւ պաշտօնական բարեւի ժամանակ



երկու ձեռքով կը բարեւեն գայլիկները:

Մեծ կանչը ընելով, Գայլիկները բարի եկար կ'ըսեն իրենց պետին, բարեւ կ'ըսեն նաեւ աշխարհի բոլո՛ր գայլիկներուն: Իսկ երկու ձեռքով բարեւն ալ կը նշանակէ, որ գայլիկը իր լաւագոյնը կ'ընէ երկու ձեռքով ու ամբողջ հոգիով եւ

երկու ականջով մտիկ կ'ընէ Աքելլան:

Մեծ կանչին տելոդութեան պէտք է մնաս միշտ պատրաստ դիրքի մէջ, իսկ երբ լսես՝

«Գա՛յլ»


Հրահանգը: Ասիկա կը նշանակէ «պատրաստ եւ լուռ կեցի՛ր»: Իսկ երբ լսես՝

«Գա՛յլ, Գա՛յլ, Գա՛յլ»

կանչը, հաւաքուելու կանչն է, ի՞նչ գործի վրայ որ ըլլաս, պիտի վազես Աքելլային քով ու պոռաս մինչեւ հասնիլդ.

«Գա՛... ա՛յլ...».

Միայն պետերը իրաւունք ունին այս ձեւով կանչելու գայլիկները, իսկ վեցեակապետ մը կամ փոխվեցեակապետ մը կրնայ իր վեցեակի գոյնով, օրինակ՝ սեւ, ճերմակ, սրճագոյն, կանչել իր վեցեակին գայլիկները:



## ՄԵԾ ԿԱՆՉԻ ԵՐԳԸ

Գայլիկներ Զ.Մ.Ը.Մ.ի,  
 Օ՛ն, վազեցեք շարքի,  
 Շրջանակի կենալու,  
 Մեծ կանչը ընելու.  
 Աքելա, մեր լաւագոյնը  
 Յո՛ւ, հո՛ւ, մեր լաւագոյնը,  
 Աքելա, մեր լաւագոյնը,  
 Յո՛ւ, հո՛ւ լաւագոյնը:



Գայ-լիկ-ներ չե ՄենդՄե-նի օն վա - զե - ցեք շար - քի  
 շըր- շա - նա - կի կե - նա - լու մի կան - չը ը - նե - լու  
 ա - քել - լա մեր լա - ա - գոյ-նը հու հու մեր լա-ա գոյ-նը  
 ա - քել - լա մեր լա - ա - գոյ-նը հու հու լա - ա - գոյ - նը:

## ***Ձեռային Աշխատանք***

Այս ձեռային աշխատանքին համար ո՛չ թուղթի պետք ունիս, ոչ ալ ներկի, այլ աշնանային պտուղներու:



Մ ա ր մ ն ի ն  
համար, կրնաս  
գործածել

խնձորը, իսկ  
գլխուն համար՝  
աւելի պզտիկ  
խնձոր մը:

Եթէ չգտար  
յարմար խնձոր  
մը, կրնաս նաեւ  
գ ո ռ ծ ա ծ Ե Լ  
փինկ- փոնկի

գնդակ մը, որուն վրայ պիտի գծես աչքերը, քիթը  
եւ բերանը:

Իսկ եթէ գտար յարմար խնձորներ, քիթին  
համար, կրնաս օգտագործել նուշ, իսկ  
աչքերուն համար՝ չամիչ:

Գլխուն երկու կողմերէն ամրացուր բամպակէ  
մօրուքը՝ պզտիկ փայտիկներով, որոնց վրայ  
փաթթած պիտի ըլլաք բամպակը եւ կը խրէք  
զանոնք խնձորին մէջ: Գլխարկի պարագային,  
եթէ կ'ուզես կրնաս թուղթ օգտագործել: Այս  
խնձորէ մարդուկէն զատ, կրնաս նաեւ շինել

ԽնձորԷ պուպրիկ մը: Անշուշտ, անոնց համար մօրուք պետք չկայ, բայց անոր համար կրնաս գլխու կապոց մը շինել:

***Ի՞նչ ծաղիկներ են ասուք:***

1.- Աշուշտ . . . . .

2.- Ակզկա . . . . .

3.- Ավոր . . . . .

4.- Ամկիյս . . . . .

5.- Ջղճակիծ . . . . .



## 16.- ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



**Ուղղութիւն** - կը գործածուի իւրաքանչիւր 60-70 քայլի վրայ, ցոյց տալու համար այն ճամբան, ուրկէ կ'ուզենք երթալ:



**Անել ճամբայ** - կը գործածուի երկու ճամբաներու առջեւ գտնուելու պարագային եւ նշանը կը դրուի սկիզբը այն ճամբուն, որ չենք ուզեր երթալ:



**Զուր** - կը գործածուի երբ մօտերը ջուր կայ:



**Վտանգը** - կը դրուի վտանգաւոր շրջանի մը մէջ, որպէսզի գայլիկը զգոյշ ըլլայ:




**Վերադարձ** - խումբը կամ վոհմակը որոշ յառաջացումէ մը ետք, վերադառնալու պահուն այս նշանը կը դնէ:



**ԳՈՆՆԱՆՈՒՄ**

## ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Ընկերոջդ նամակ մը գրե անտեսանելի մելանով: Մելանը շինելու համար պետք ունիս կաթի կամ կիտրոնի հիւթի (լիմոնի հիւթը), որպէս մատիտ գործածէ ատամնակրկիտ.



Երբ անտեսանելի մելանը չորնայ, դուն բան չես տեսներ թուղթին վրայ, բայց երբ լոյսին վրայ դնես, լոյսին տաքութիւնը քու գրած գիրերդ պիտի դարձնէ բաց սրճագոյնի, ինչ որ ընկերդ պիտի կարենայ կարդալ քու գաղտնի նամակդ:

## 17.- ԱՆՈՒՆ ՄԱԿԱՆՈՒՆ ԵՒ Ե- ՀԱՍՑԷ ԳՐԵԼ

Գայլիկ մը պետք է անունը, մականունը գրել գիտնայ: Պետք է նաեւ գիտնաս ծնողքիդ հեռաձայնին թիւը ,նաեւ իմանաս տան հասցէդ:

Ի՞նչ է **ե- հասցէն (e-mail)**:

Կը տեսնես միշտ, հայրիկը կամ մայրիկը ե- նամակ (e-mail) կը ստանան: Փորձէ՛ ունենալ անձնական ե-նամակի հասցէ մը եւ վոհմակի գայլիկ եղբայրներուդ հետ նամակցելով վարժութիւն ունեցիր այս արդիական նամակագրութեան միջոցադրումին:

**Գրէ՛ ե-նամակի հասցէդ**

..... @..... ■ .....



**Օրինակ՝**  
**kayligbedig@hotmail.com**  
**ardzvigpalig@gmail.com**

# TRAIN SONG


(To tune of -Yankee Doodle-)

I met an engine on a hill,  
All hot and broken - hearted,  
And this is what he said to me  
As up the hill he started:

(Slowly)  
I think I can, I think I can,  
At any rate I'll try.  
I think I can, I think I can,  
At any rate I'll try.

He reached the top, and looking back  
To where he stood and doubted,  
He started on the downward track  
And this is what he shouted:

(Faster)  
I knew I could, I knew I could,  
I never should have doubted.  
I knew I could, I knew I could,  
I never should have doubted.



## Ժամանց

*Ինչպես գծել, կոլ արջ եւ առիւծ.*


Գայլին համար գծե ադամանդի կտորի մը ձեւը, իսկ կլոր՝ արջին եւ առիւծին համար:

Ապա անելուր գիծերը ինչպես որ վարը գծուած են:



## 18.- ԿՕՇԻԿ ԿԱՊԵԼ, ՄԱԶ ԱՄՆՏՐԵԼ



Կան գայլիկներ, որոնք իրենց կօշիկին կապը կապել կամ իրենց մազերը սանտրելու համար կ'երթան մայրիկին: Եթե դուն ալ կ'երթայիր մինչեւ հիմա այլեւս պիտի չերթաս, եթե ուշադրութեամբ հետեւիս վարի նկարին եւ փորձես քու կօշիկիդ կապերը կապել՝ անպայման պիտի յաջողիս:



## Պահուած պատկերներ

Այս խոշոր պատկերին մէջ կան 10 տարբերութիւններ:

Գտի՛ր եւ ներկէ՛ գանոնք:



# Գայլիկ Ըլլալ Գայլիկ...


Գայլիկ ըլլալ գայլիկ,  
 Ասկէ աղուոր ի՞նչ կայ:  
 Գայլիկ ըլլալ գայլիկ,  
 Ասկէ աղուոր բան չկայ:  
 Գայլիկ, գայլիկ ասկէ աղուոր ի՞նչ կայ.  
 Գայլիկ, գայլիկ ասկէ աղուոր բան չկայ:

Գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ- ւոր ինչ կայ,  
 գայ- լիկ ըլ- լալ գայ- լիկ աս- կից աղ-ւոր բան չը-կայ գայ-  
 լիկ գայ- լիկ աս- կից աղ- ւոր բան չը- կայ գայ-  
 լիկ գայ- լիկ աս- կից աղ- ւոր բան չը- կայ  
 գայ-լի-կը մեծ գայլը մը- տիկ կ'ընէ բայց գայլիկը ինք զինքը մը-  
 տիկ չ'ը - նէր:




## 19.- Մարմնային ճկունության շարժումներ

-Փորձե՛ գնդակը նետել



-Քալել չորս ոտքով



-Գորտի պես ցատկել




-Գլխու վրայ դառնալ



**ՆԵՐԿԵԼՈՒ ԽԱՂ**

7 տարբեր գույներով ներկե այս գծագրությունը եւ 5 տարբեր նկարներ երեւան պիտի գան:

Թիւ 1 նշանակուած մասերը նարնջագոյն ներկե, 2- սրճագոյն, 3- կարմիր, 4- դեղին, 5- կանաչ, 6- վարդագոյն , 7- կապոյտ:



## ԿԱՆՉ

### Մենք Գայլիկներ

Մենք գայլիկներ Յ.Մ.Ը.Մ.ի

Անվեհեր, առաքինի,

Ուրախ, զուարթ, մենք ձեռք-ձեռքի,

Պար մը բռնենք հեշտալի:

(Կրկնել)

Մենք գայլիկներ Յ. Մ. Ը. Մ.ի  
Անվեհեր, առաքինի,  
Ուրախ, զուարթ, մենք ձեռք-ձեռքի,  
Պար մը բռնենք հեշտալի:  
(Կրկնել)




## 20.- ՓՈՂԿԱՊ ԿԱՊԵԼ

Փողկապը կը տրուի Գայլիկին, երբ իր խոստումը կու տայ: Փողկապը երբեք չհանել վիզէն, հոս, հոն չծգել, պահել միշտ վիզին վրայ մաքուր եւ կոկիկ:

Քու տարիքիդ Գայլիկ մը անպայման կ'ուզէ որ ինքզինքին հոգ տանի, կ'ուզէ փողկապը կապել առանց ծնողքին օգնութեան, եթէ նկարին հետեւիս եւ Աքելլային բացատրութիւնները մտիկ ընես, շուտով պիտի կարենաս փողկապդ առանձին կապել:





Փորձե՛ք նոյնը գծել

